Ձև N 2

Կադաստրի կոմիտե

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ծրագրի հերթական համարը	նպատակը	միջոցառումների անվանումները	միջոցառումների իրականացման արդյունքները	միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	ծանոթագրություն
1	2	3	4	5	6
	Ինտեգրված կադաստրի ստեղծում	1.5 Համակարգչային սերվերի լրակազմի վարձակալություն	Կազմվել է սերվերային համակարգի ընդլայնման նպատակով սերվերի լրակազմի 1 տարի ժամկետով վարձակալության տեխնիկական առաջադրանքը, և կազմակերպվել է գնման ընթացակարգ: Սերվերի լրակազմը վարձակալվել և տեղադրվել է տվյալների կենտրոնում:		
3	Հայաստանի Հանրապետության տարածքի	3.2 Երկրատեղեկատվական	Թվայնացվել, ստանդարտացվել և ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալ մուտքագրվել է Երևան քաղաքի		

	երկրատեղեկատվական համակարգերի բազային շերտերի թարմացում	համակարգում Հայաստանի Հանրապետության բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներ	բազմամասշտաբ բազային քարտեզագրական շերտերը (ջրագրություն, ճանապարհային ցանց, ռելիեֆ), ինչպես նաև օդալուսանկարահանման միջոցով ստացված օրթոֆոտոհատակագծերով ծածկված տարածքներում ՀՀ մարզերի բազային քարտեզագրական շերտերը (ջրագրություն, ճանապարհային ցանց, ռելիեֆ)՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման պահանջներին համապատասխան:		
4	Կադաստրային քարտեզների ուղղման աշխատանքների իրականացում	4.2 ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ծածկված համայնքների կադաստրային քարտեզների ճշգրտման աշխատանքներ	Առցանց միջավայր են մուտքագրվել 780 բնակավայրերի ուղղված կադաստրային քարտեզներ: Ընթացքի մեջ են 50 բնակավայրերի կադաստրային քարտեզների թաղամասերի սահմանների ուղղման, հաստատման և դրանք առցանց միջավայր մուտքագրելու աշխատանքները: Իրականացվել է նաև կադաստրային քարտեզում չտեղադրված շուրջ 9,000 գույքային միավորների նույնականացում:		
		4.3 ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով	2025 թվականին Կադաստրի կոմիտեի նախաձեռնությամբ իրականացվել է բնակավայրերի կադաստրային քարտեզների ուղղում, որի կատարման		

		անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կետերի դիտարկում	ընթացքում լրացուցիչ կետերի դիտարկման անհրաժեշտություն չի առաջացել:		
7	Թեմատիկ ատլասների ստեղծում	7.1 Նոր ձևաչափով՝ տպագիր, բազմալեզու, ինչպես նաև համացանցում տեղադրված հնարավորությամբ ատլաս	Իրականացվել են «Աշխարհի պետությունների տեղեկատու ատլասից» (շուրջ 200 էջ) 158 էջ աշխարհագրական հիմքերի նախապատրաստման, քարտեզների բովանդակության մշակման, տեքստերի մշակման, ինչպես նաև ձևավորման, քարտեզագրական նյութերի խմբագրման և սրբագրման աշխատանքներ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ վարչապետի 2024 թվականի հուլիսի 29-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» N 702-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության նոր «Պետական ատլասի» տեխնիկական առաջադրանքի կազմման և մշակման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից 2025 թվականի ընթացքում տեղի է ունեցել նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են «Պետական ատլասի» տեխնիկական առաջադրանքի կազմման և մշակման ընդհանուր մոտեցումները: Պարբերաբար ամփոփվել են էլեկտրոնային հարթակի միջոցով գերատեսչությունների կողմից ներկայացված առաջարկություններն		

			ու արդյունքները: Մասնագիտական խմբերի կողմից քննարկվել են համապատասխան թեմատիկ քարտեզները, դրանք «Պետական ատլասում» ներառելու կամ բացառելու վերաբերյալ հարցերը, ինչպես նաև տեխնիկական առաջադրանքի մշակման սկզբունքները, քարտեզների միավորման (խմբավորման) հնարավորությունները և մասշտաբները: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ աշխատանքային քննարկումների և ներկայացված առաջարկությունների հիման վրա (ըստ պատրաստվածության) կազմվել են թեմատիկ քարտեզների ցանկերն ընդհանրական նկարագրերով, որոնք գտնվում են լրամշակման փուլում:		
8	Հայաստանի Հանրապետության Տարածքում գեոդեզիական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացում	8.1 Հայաստանի Հանրապետության ներկայիս բարձունքային մոդելի ճշտության բարձրացման նպատակով՝ միջազգային գործընկերների հետ համագործակցության շրջանակներում փորձի	2025 թվականի ապրիլի 7-ից 11-ը Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ներկայացուցիչները Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարության և օդատիեզերական արդյունաբերության նախարարության գեոդեզիայի և քարտեզագրության կոմիտեի հրավերով մասնակցել են Ղազախստանի Ալմաթի քաղաքում կայացած «15-րդ միջազգային դպրոց. Գեոիդի սահմանումը և կիրառումը» խորագրով աշխատանքային շաբաթին: Աշխատանքային շաբաթվա		

		փոխանակում, նոր և ժամանակակից մեթոդների կիրառման վերաբերյալ հմտությունների ձեռք բերում	ընթացքում քննարկվել են գրավիտացիոն դաշտի, գեոիդի հաշվարկի ընդհանուր տեսությունը, գլոբալ գեոպոտենցիալ մոդելները և բարձունքային համակարգերը: Կոմիտեի ներկայացուցիչները քննարկումներ են ունեցել ոլորտի հեղինակավոր փորձագետների հետ՝ նորարարական լուծումների միջազգային փորձը ոլորտի զարգացման ուղղությամբ կատարվող աշխատանքներում կիրառելու նպատակով: 2025 թվականի մայիսի 4-ից 9-ը Շվեդիայի Թագավորության Գավլե քաղաքում Կոմիտեի ներկայացուցիչները մասնակցել են գեոիդ մոդելի մշակման, մշտապես գործող ռեֆերենց կայանների ցանցի կառավարման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին, որոնք կազմակերպվել էին Շվեդիայի քարտեզագրման, կադաստրային և հողերի գրանցման մարմնի (Lantmäteriet) կողմից: Կոմիտեի մասնագետները ծանոթացել են Շվեդիայի գեոդեզիական ենթակառուցվածքին, գեոիդին, բարձունքային համակարգին, գրավիտացիային, Շվեդիայի գեոիդ մոդելի սահմանման անհրաժեշտ տվյալներին, GNSS բարձունքային համակարգին, բացարձակ և հարաբերական գրավիմետրիային, և գործնական աշխատանքների հիման վրա		

			կատարվել է ծանրաչափական հաշվարկ: Դասընթացի ընթացքում հիմնավորվել է ՀՀ նոր գեոիդ մոդելի մշակման կարևորությունը՝ ճշգրիտ բարձրություններ ունենալու նպատակով: Կոմիտեի աշխատակիցները պարբերաբար մասնակցել են ոլորտի զարգացմանն ուղղված առցանց միջոցառումների (դասընթաց, սեմինար, աշխատանքային քննարկում), այդ թվում՝ 2025 թվականի նոյեմբերին կայացած «Strategic Initiative: Webinar on Future Reference Frames» խորագրով վեբինարին:		
9	ՀՀ տարածքում բազմամասշտաբ բազային քարտեզագրական շերտերի ստեղծում	9.1 Քարտեզների կազմում՝ ընդհանրացման եղանակով	Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ազգային գեոպորտալ մշակվել և մուտքագրվել է Երևան քաղաքի բազմամասշտաբ բազային քարտեզագրական շերտերը (ջրագրություն, ճանապարհային ցանց, ռելիեֆ), ինչպես նաև օդալուսանկարահանման միջոցով ստացված օրթոֆոտոհատակագծերով ծածկված տարածքներում ՀՀ մարզերի բազային քարտեզագրական շերտերը (ջրագրություն և ճանապարհային ցանց՝ բազմամասշտաբ, ռելիեֆ)՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Տարածական տվյալների ստանդարտացման ուղեցույցները		

			հաստատելու մասին» N 1569-Ն որոշման պահանջներին համապատասխան:		
10	Առցանց, ինքնաշխատ, անշարժ գույքի կադաստրի ներդրում	10.4 Առցանց տրամադրվող տեղեկությունների տեսակների ընդլայնում՝ նոր տեղեկատվական փաթեթների մշակում, տեղեկատվության որոնում առցանց վարվող կադաստրային քարտեզներից	• Ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգը կապակցվել է Էկոնոմիկայի նախարարությունում և Քաղաքաշինության կոմիտեում ներդրված համակարգերին՝ «OGC WMS» ծառայության միջոցով տվյալների փոխանակումը իրականացնելու համար: • Մշակվել և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին տրամադրվել են նոր վեբ ծառայություններ Վիճակագրական կոմիտեի, Կենտրոնական բանկի, Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության համար: Վերանայվել և արդիականացվել են նախկինում տրամադրված վեբ ծառայությունները՝ ըստ օգտվողների կողմից ներկայացված առաջարկությունների: • Արդիականացվել է e-cadastre.am հարթակի «Իմ անշարժ գույքերը» բաժինը և վերանվանվել է «Անձնական գրասենյակ»: Այժմ խիստ նույնականացման գործընթաց անցած օգտվողները կարող են ոչ միայն տեսնել իրենց անշարժ գուքերի ցանկը, այլ նաև օգտվել հետևյալ ծառայություններից՝ ○ գույքի վերաբերյալ տեղեկատվության հարցում՝ ինքնաշխատ եղանակով,		

			○ դիմումի մուտքագրում, ○ կադաստրային գործի փաստաթղթերի դիտում, եթե իրավունքի կարգավիճակը «գործող» է, իսկ իրավունքի տեսակը՝ «սեփականություն», «ընդհանուր համատեղ սեփականություն», «ընդհանուր բաժնային սեփականություն», ○ տեղեկացնել նկատված սխալի վերաբերյալ, ○ ստանալ ծանուցումներ: • Էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակում (e-cadastre.am) ներդրվել է քարտեզագրական ենթահամակարգ անշարժ գույքի հասցեավորման տարբերակներ առաջարկելու համար: • Ազգային գեոպորտալում (geoportal.am) ներդրվել է աշխարհագրական անվանումների անձնագրերի ձևավորման հավելվածը: • Ապահովվել է վեբ սերվիսների միջոցով փոխգործելիություն Քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների հարթակի, Էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգի, Ֆինանսների նախարարության «Client treasury» համակարգի հետ:		

			• Ներդրվել է ՀՀ-ում գործող բանկերի կողմից տրամադրված անդորրագրերի գեներացման և ստուգման հնարավորություն: • Ինտեգրվել է քաղաքացիների գոհունակության գործիքը e-cadastre.am հարթակին և բջջային հավելվածին: • Փորձնական ռեժիմով գործարկվել է նոր ազգային գեոպորտալը (new.geoportal.am), և ապահովվել է հասանելիություն պետական կառավարման մարմիններին: Շարունակական աշխատանքներ են իրականացվում e-cadastre.am հարթակի դիզայնի փոփոխության, նոր հնարավորությունների ներդրման և դիմումների մուտքագրման գործընթացի պարզեցման ուղղությամբ:		
		10.6. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի	ՀՀ Ազգային ժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունվել է ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-342-Ն օրենքը, որով իրականացված օրենսդրական փոփոխությունների հիման վրա սահմանվել է կադաստրային գործի էլեկտրոնային տարբերակով վարման կարգը.		

		նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում	մասնավորապես՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների, դրանց դադարեցման պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակներ թղթային տարբերակով ներկայացնելու և դրանք էլեկտրոնային տարբերակի փոխակերպելու միջոցով: Օրենքի գործնական կիրառումն ապահովելու համար ընդունվել է նաև Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 29-ի «Էլեկտրոնային համակարգ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի տեսաներածման, մուտքագրման, տեխնիկական միջոցներով դիմումատուի լուսանկարման և դրա մշակման կարգը, ինչպես նաև դիմողին տրամադրվող արագ արձագանքման (QR) կոդ պարունակող քաղվածքի ձևաթուղթը հաստատելու մասին» N 481-Լ հրամանը:		
12	Անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով կառուցվածքային	12.2 «Սպասարկման գրասենյակների օպտիմալացում ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման, օպերատորների	Անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով Կադաստրի կոմիտեն իր կազմում գործող սպասարկման գրասենյակների ամբողջական օպտիմալացման նպատակով մշակել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N		

	բարեփոխումների իրականացում	(համայնքներ, «Հայփոստ» ՓԲԸ և այլն) կողմից մատուցվող ծառայությունների ցանկի և աշխարհագրության ընդլայնման:Օպտիմալացված գրասենյակների փոխարեն խորհրդատվական կենտրոնի ստեղծում	749-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը, որը ՀՀ տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2025 թվականի նոյեմբերի 17-ի նիստում ստացել է դրական դիրքորոշում, ինչպես նաև մշակվել և ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 30-ի N 1502-Ա որոշմամբ:		
16	Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվության (հողային հաշվեկշռի) կազմում	16.1 «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունում	Հաշվի առնելով, որ 2024 թվականի հողային հաշվեկշռի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) վերադարձվել էր լրամշակման՝ Կադաստրի կոմիտեն 2025 թվականի ընթացքում միջոցառման նշված կետի կատարումն ապահովելու նպատակով դիմել է շահագրգիռ մարմիններին՝ դիրքորոշում ստանալու նպատակով:		

17	Կադրային բանկի համալրում	17.1 Համագործակցություն ոլորտային կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հետ, կրթական ծրագրերի վերանայում, լաբորատորիաների ստեղծում	ՀՀ տարբեր բուհերի ուսանողներ (բակալավրիատի ուսանողներ, մագիստրոսներ, ասպիրանտներ) արտադրական պրակտիկաների շրջանակում անցնում են պրակտիկա Կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության բաժիններում: Յուրաքանչյուր տարի շուրջ 250 ուսանողի ներկայացվում է մասնագիտական ոլորտների դերը և կարևորությունը, ինչպես նաև ժամանակակից հնարավորությունները: Համագործակցության շրջանակներում համատեղ վերանայվում են մասնագիատական կրթական ծրագրերը, որոնք համապատասխանեցվում են ժամանակակից արտադրության չափանիշներին: Կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության աշխատակիցները մասնակցել են 30-ից ավելի տարբեր միջազգային և տեղական նշանակության գիտաժողովներին, սեմինարներին, քննարկումների՝ այդ թվում առցանց, հանդես են եկել բովանդակային զեկույցներով: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի		

			նախարարի հրամաններով հաստատված ՈՈԾ-ների հիման վրա վերանայվել են «Շինարարական ճարտարագիտություն» և «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունն ու կառուցվածքը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից պարբերաբար վերանայվում են կրթական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին:		